




ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԲՐԱՆԻ ՄԱՐԿԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԲՐԱՆԻ ՄԱՐԿԱՆ

ԹԻԻ 102

5 ՅՈՒԼԻՍ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱՆԹԱՆԵՐԹ

Երրորդ տարի Թ 5 Յուլիս 1913 Թիւ 102

«Սրբազան Բանանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն սրտազին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի տէր Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թեոքեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քու ամսամատ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՀԱՅԵՐ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՍԵԱՆ

(Շար.)

Յայտ վայր մեր պատմաբաններէն մի քանիին յառաջբերումները, որոնք ըստ մեզ համոզիչ եւ վճռական են. արդ քանի մը խորհրդածութիւններ ընենք, եղբակացութիւններու յանգինք:

1. Նախ ընդհանրապէս պէտք է խոստովանիլ որ Բնադատութիւնը՝ որքան ալ խիստ եւ մանրախոյզ ըլլայ, չի կրնար մինչեւ ցարդ պատմուած գէպերուն, որոնց հիմն է Ազաթանգեղոս, էական մասերը ուրանալ, իբր մտացածին եւ յերիւրեալ. անոնք պատմական ստուգութիւն են: Հայ պատմութեան ամենէն առաջին, ամենէն լուրջ, հեղինակաւոր ու

մեծ քննադատը, հանճարաւորն Գաթրճեան, այս մասին հիմնական վճիռը արձակած է արդէն՝ իննեւտասներորդ դարու կէսին. Որչափ եւ խիստ եւս այն բանադատութիւն իցէ, որ ցայս վայր յանդգնիցի յառաջել՝ (այսինքն նորանշան դարմանալեաց մի քանին մերժելու), սակայն աստի յառաջ չի բխէ խաղալ, այսինքն ընդ երկրորդական ինչ հանգամանաց գեական մասունս պատմութեան դարձին Հայոց ջնջել: * Իսկ ի Հռոմ ուղեւորութեան մասին նոյն հոյակապ եւ սրտտես արժուանք պատմաբանը ու բանդատը սապէս վճռած է. Վասն երկրորդ ճանապարհորդութեան նորա (Գրիգորի) այսինքն ի Հռոմ կոյս ընդ Տրդնսայ, ԶԻՔ ԻՆՉ ՈՒՍՏԵՔ ՀԱԿԱՌԱԿՈՒԹԻՒՆ **:

2. Եւ յիրաւի: Ինչպէս վերը մասնաւորապէս չեղտեցինք, Ազաթանգեղոս այս պա-

* Տեկգ. Պատմ. Բ. էջ 477.

** Անդ, էջ 479.

րագայիս մէջ չուզեց և չկրցաւ խաբել հայ ազգը: Ինքը այս պատմութիւնը յերկրեւոյ մասնաւոր դիտում մը չէր կրնար ունենալ. անոր՝ ապագային մէջ, եկեղեցական ծանր հետեւութիւնները դեռ բնաւ խնդրոյ առարկայ եղած չըլլալով, չէին կրնար զինքը մղել այսքան մտացածին ցնորք մը յերկրեւոյ: Ընդհանուր եկեղեցւոյ հետ անկեղծօրէն կը հաւտացուէր Հռոմայ Քահանայապետներուն Գլխաւորութեան, որ Հայ Եկեղեցւոյ համար ալ սոցյգ էր արդէն, առանց այս ճամբորդութեան ալ: — Նոյնպէս չէր կրնար խաբել, քանի որ սոցյգ աղբիւրներէ կը քաղէր իր պատմած գէպքերը, ինչպէս վերը ըսինք: Եւ ինչպէս պիտի յանդգնէր յերկրեւոյ, քանի որ գրեթէ ժամանակակից, գիտակից և ուսեալ ու նախանձախնդիր համայնքի մը համար կը գրէր. և սկանաւորներու գրութիւնները կը գործածէր, գրութիւններ՝ որոնք իր մէջ զատ ծանօթ էին նաեւ ամենուն: Այլ խաբհի, հայ և հռոմէական աշխարհի առջեւ գործուած հանրածանօթ գէպք մը կը պատմէր, Քահանայապետներու, Կայսրներու անուններ, ուխտեր, դաշինքներ յիշելով, Կ'ենթարկէր զինքը աշխարհի դատաստանին:

3. Իր պատմածին մի մասը, դաշինքը, զոր Տրդատ կոչեց Կոստանդինոսի հետ*, քանի որ ամենաստոյգ է, միւս մասը, որ անոր գլխաւոր պատճառը, հիմը, շարժառիթն է, այս է ճամբորդութիւնը, ինչպէս կրնայ կասկածելի նկատուիլ: Եթէ զարդարած է, զարդարանքը՝ գէականը չի փոխեր: Ծշմարտապատումն և անաչառն Տակիտոս իր անմրցելի վրձինի հարուածներով որքան անմահ զարդարանքներ դրած է իր ստուգապատում պատմութեանց և տարեգրութեանց մէջ: Նոյնպէս և ուրիշ շատեր: Պատմութիւնը՝ գեղեցիկ զրպրութեանց կարգէն է: Եթէ իր աւելաբանութեանց մէջ կայ դարովելի բան մը, դարովե՛նք, բայց ատիկա չի կրնար հիմնականը խախտել, ոչնչացնել:

4. Մեր ամենէն հին, Ագաթանգեղոսի

* Միանգամ ընդ միշտ կ'ըսենք թէ բնաւ չենք ուզեր և ոչ իսկ ակնարկել քուղք զաւսնց կոչուած անվաւերական յերկրեւածին:

ժամանակակից, ամենէն անկեղծ ու լուրջ պատմիչներն իբրեւ անկասկած ընդունած են Ագաթանգեղոսի պատմածները այս ճամբորդութեան ու դաշանց մասին, ըստ բերելոյ պարագայից՝ ոմանք միայն դաշինքը, ոմանք երկուքը միանգամայն կը յիշեն: Ամբողջ ազգն ու կղերականութիւնը, իր մտաւորականաց հետ, զանոնք ընդունած է՝ ո՛չ միայն իբր վստահելի և ճշմարիտ, այլ իրենց նեղութեանց մէջ նիւթական մեծ զոհողութիւններ օգնութիւններ խնդրելու համար կայսրերու կը յիշեցնեն այս գէպքերը: Ասոնք ամենքը խաբուեցան, խաբեցին... Օրն անդր:

5. Եւ սակայն այս կայսրերը, Կոստանդինոսի որդին Կոստանդիոս, Թէոդոս Փոքր ևն. կ'ընդունին այս գէպքերու ճշմարտութիւնը: Նոյն իսկ կայսերական դիւաններու փոշոտած մագաղաթները, յիշատակարանները, բազում մատենները կը հաւատեն, կը հաստատեն ասոնց ճշմարտութիւնը, ստուգութիւնը:

6. Ս. Արիստակէսի Նիկիոյ տիեզերական Ժողովին զրկուիլը ամենաստոյգ է, և կ'ապացուցուի նոյն Ժողովոյ արձանագրութիւններէն: Եպիսկոպոսաց ցանկին յոյն, հռոմայեցի և հայ օրինակները յականէ յանուանէ ունին զԱրիստակէս ի Հայոց մեծաց: Ուրիշ հայ եպիսկոպոս մըն ալ կայ այս յանկին մէջ կ'ըսէ Գաթրճեան, Արաւիքոս ծովաց որ թերեւս ըլլայ Արսուկէս, Գրիգորի յառաջատուն եպիսկոպոսներէն մին, որոնց անունները մի ըստ միով կը յիշատակէ Հայոց դարձին պատմութեան մատենը: Արդ, Ագաթանգեղոս, Հռոմայ ճամբորդութենէն անմիջապէս վերջը կը պատմէ Արիստակէսին ի Նիկիա առաքումը, բնական յաջորդութեամբ և միեւնոյն ոճով և հիւստեածով: Աս ալ անդիմադրելի փաստ մըն է իր ճշմարտախօսութեան յեականս:

7. Արաաքին պատմիչներու լռութիւնը չի կրնար ջնջել գէպքը. լռութիւնը եթէ երբէք կատարեալ ևս ըլլար, բացասական է. այսքան հիմնաւոր դրականը չկրնար ոչնչացնել: Անոնց համար մեծ նշանակութիւն մը չունէր այս գէպքը. և անոնք արդէն քղերենք շա-

հագրագող մեծամեծ գէպքեր անգամ զանց ըրած են, բայց ասոր համար այն գէպքերը չեն ոչնչանար: Ահապէն կայսրութեան մը ամենամեծ գէպքերը արձանադրելու հազիւ կը բաւէին: Բնադատութեան սկզբունք է՝ ժխտականով դրականը չի ջնջուիր: Արտաքին պատմիչները չեն աւանդած Եւրոպեացոց և նոյն իսկ Քրիստոսի և Առաքելոց պատմութեան ամենամեծ և մարդկութեան համար զերաւորեման կարեւորութիւն ունեցող մանրամասնութիւնները. սակայն և այնպէս առնոք ամենասոյգ են: Եթէ Մաքսիմիլիոս Դայայի դէմ Հայոց տուած պատերազմն ու տարած յաղթանակը Եւսեբիոս ըստ դիպաց իմն իբր միջանկեալ պատմած չըլլար և Հայք միայն զայն գրած ըլլային, ուրեմն այն գէպքը ասոր համար անհաւանակա՞ն կամ տարակուսակա՞ն պիտի սեպուէր: Ասանկ լուծած ո՛րքան մեծամեծ գէպքեր կան, որոնք սակայն ստոյգ են և ուրիշներէն լուծած ըլլալին ընաւ փաստ մը չի կազմեր ի հակառակն: Յովսեփոս չի գրեր, օ. հ. մողերու և Բեթղէմի կոտորածին պատմութիւնը, Հերովդէսի վրայ ընդ երկար գրելով հանդերձ. Եւսեբիոս, որ Ս. Հեղինայ վարքը գրեց, բան չըսեր անոր Ս. Խաչը գտնելուն վրայօք. Ղազար Փարպեցի, որ Վարդանանց լիակատար պատմութիւնը կ'աւանդէ, բոլորովին կը լռէ մոգպետին դարձը, որ Եղիշէի սքանչելի պատմութեան ամենահիմնալի զրուագներէն մին կը կազմէ, ևն. ևն.: Ուրեմն այս տեսակ լուծութիւններու համար պիտի մերժե՞նք այս գէպքերուն իրականութիւնը: Բնա՛ւ, ամենեւին ո՛չ:

8. Այսու հանդերձ արտաքին պատմիչները բոլորովին անծանօթ չեն այս հռչակաւոր եղելութեանց, Հայոց դարձին, որ կը բովանդակէ յինքեան նաև զմեզ զբաղեցնող անոր մէկ գլխաւոր գէպքը: Սոզոմենոս և Եւսեբիոս, թէև իբր միջանկեալ, սակայն իբր ճշմարիտ կը պատմեն այս եղելութիւնները իրենց եկեղեցական պատմութեան մէջ. կը միաբանին Հայոց դարձին ժամանակին վրայ, (303—310) անձանց վրայ, թէ՛ թագաւոր, զօրք և ժողովուրդ քրիստոնեայ եղան, և

աստուածանւան իմն սքանչելեօք: Նոյնպէս Ատտիկոս Հայրապետ, ի սկզբան Ե. դարու, կը յիշէ զՍ. Գրիգոր իբր ծանօթ: Նոյնպէս մեծ կարեւորութիւն ունի նաև Արտիթեայ եպիսկոպոսի վկայութիւնը, Խոր. Բ. Դ. 2.*

9. Զի զօրեր նոյնպէս առարկել թէ Կոստանդիանոս առհասարակ կը գտնուէր հիւսիսային Եւրոպիոյ մէջ եւ ոչ յիտալիա: Նախ պէտք է գիտել թէ այն ժամանակները, թէև ուղեւորութիւններ չէին կրնար այնչափ արագօրէն կատարուիլ՝ ինչպէս հիմա, սակայն և այնպէս հռոմէական պետութեան մէջ ճամբաները շատ կանոնաւոր էին, ամենամեծ կարեւորութիւն կը տրուէր անոնց, որ սալյատակ կը շինուէին և անոնց այժմեան մնացորդները կը զարմացնեն տեսնողները: Որով, մանաւանդ կայսերք, շատ դիւրութեամբ կը ճամբորդէին, և կարծուածէն շատ աւելի դիւրութեամբ և արագութեամբ կը տեղափոխուէին: Պատմութիւնը ասոր հազարաւոր փաստեր կու տայ մեզ, մանաւանդ Կոստանդիանոսի օրով: Անոր համար կայսեր այս ինչ տարիներու մէջ ի Դադղիա գտնուիլը ապացուցուելով, չի հետեւիր թէ նա նոյն տարիներու մէջ գացած չըլլայ յիտալիա, թէև պատմիչները զայդ չյիշատակեն: Յայտնի է որ Կոստանդիանոս միշտ շարժման մէջ էր, եւ կայծակի պէս կը հասնէր ամէն տեղ: Նի-

* Տե՛ս Գաթըճ. Բ. էջ 477—478.— Խորենացւոյն այն գլխոյն տիտղոսն այս է. «Յայտարարութիւն սակաւուք սննդեան եւ վարուց Գրիգորի եւ որդւոցն, ի թղթոյն Արթիթեայ եպիսկոպոսի, որ վասն հարցմանն Մարկոսի միսյնաւորի ի Յագոթնանի»:

— Զարմանալի բան է որ Հռոմայ մօտ Սապի-նայի Սորակտիոն լերան վրայ, որու յիշատակութիւնը կայ Խորենացւոյն մէջ (Բ. Դ. 2. Գ.), շատ հին արքայադահլի մը մէջ մատուռ մը կը գտնուի, որու մէջ որմանկար մը կայ, նոյնպէս շատ հին, որ կը պատկերացնէ Ս. Գրիգոր Լուսաւորչի ողջագործելը Ս. Սեբաստիոս Բաճանայրպետին հետ:

— Պէտք է նաև յիշենք Գաթըճեանի մէկ ուրիշ երոկացութիւնը որ կ'ընէ. «Ճօղիւ ի նմիմ ամի, պատկեր Եւսեբիոս (Վարք Կոստանդիանոսի, Ա. ԽԳ.) օտարականաց բազմաց զայ առ Կոստանդիանոս ի Հռոմ եւ յիմել ի նմանէ մեծապարգեւ»: Անդ, էջ 479: Զայս իբր 3րդ դիտողութիւն կը յիշատակէ նաև Տաշեան, էջ 446:

կոմիտէիսէն իր հօրը քով փախչելուն, Գերմաններուն վրայ արշաւելուն, Մաքսենտինոսի վրայ յարձակելուն, Լիկիանոսի վրայ արծուոյ պէս խոյանալուն եւն. զէպքերը զայս կը հաստատեն: Ստոյգ է որ Կոստանդիանոս 313ին Փրանկաց զէմ պատերազմեցաւ. բայց Մարտէն մինչեւ Յուլիոս Նոյնպէս 314ին Լիկիոնիոսի զէմ, բայց Սեպտեմբերէն մինչեւ Նոյեմբեր: Իր պատերազմի տարիներուն մէջ ալ երկար պարապոյ ամիսներ ունէր: Նա մանաւանդ որ այլուստ ի պատմութենէ կը ստուգուի եւ որ Կոստանդիանոս ի Հռոմ կը գտնուէր՝ Ս. Սեղրեստրոսի քով, նաեւ 315, 318 եւ 319 տարիներուն մէջ եւ դեռ ուրիշ տարիներ ալ*: Սակայն գերահռչակն Գաթրճեան աւելի կը նախադասէ 312 տարին այս մեր երկուց տէրանց Գրիգորի եւ Տրդատայ ի Հռոմ ճամբորդութեան համար: Որպէս եւ իցէ, ճիշդ տարուան եւ ամսուան որոշումը չի կրնար ճշգոյսիլ՝ եւ այն՝ էական ալ չէ. բաւական է որ զէպքը ստոյգ եւ անժխտելի է: Մեծամեծ զէպքերու ժամանակագրութիւնը, ո՛չ միայն հին, այլ եւ նորագոյն ժամանակաց, անորոշ կը տատանին ստէպ. զէպքերը սակայն չեն մերժուիր,

(Շարունակելի)

ՏԵՐ ԿՈՍՏՆԱՍ ՔԱՀԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

ՅԱԻՆԱՌԱՄԵ Ն.

ԵՐԱՆՆԷԻ ՏԵԱՌՆ ԿՈՍՏՆԱՍՍԱՅ ՍՐԱՑՈՒՑՄԱՆ
Չ Ե Ռ Ն Ա Ր Կ Ը

Պատշաճ էր որ Հայ Կաթողիկէ հասարակութիւնը անսարբեր չի մնար այսպիսի քաջարի եւ վեհանձն հոգւոյ մը մասին որ իր սուրբ արիւնը Կաթողիկէ հաւատոյ համար հաստատակամութեամբ հեղղով, ապացոյցը տուաւ կրօնական տեսակէտով իր պինդ յարուսին հռովմէական անյաղթ Ս. Հաւատոյ

* Գաթրճ. Բ էջ 479.

եւ անոր անտեսանելի Գլուխը ու հաստատիչը Գրիստոսի եւ Անոր տեսանելի Յաջորդին:

Յիրաւի Հայ Կաթողիկէ հասարակութիւնը որ իր կրօնքով հաստատապէս կապուած է հռովմէական Ս. Եկեղեցւոյ՝ ամէն անկէ բաժնուած եւ անոր հետ յարաբերութեան մէջ չեղող հասարակութեանց մոլար դաւանութենէն ինքզինքը զգուշացնելով, խորապէս զգաց վեհութիւնը նահատակութեան Տեսուն Կոմիտասայ քահանայի Քէօմլըճեանց, եւ զգալով հանդերձ յիշեց իր ունեցած մեծ պարտականութիւնը, այսինքն զիմելու առ Առաքելական Աթոռն, ուսկից կը բղիւխէ ճշմարտութեան անսխալ վճիռք: Սակայն եւ այնպէս չուրջ երկու հարիւր տարիներու ընթացքին մէջ, աննպաստ պարագաներ չներկելով, հազիւ վերջին երեք քառորդ դարու մէջ պատեհ առիթն ու համարձակութիւնը ունեցան յատկապէս խնդրելու Ս. Աթոռէն նահատակիս որբացացումը կամ անոր մարտիրոսացման պաշտօնական յայտարարութիւնը:

Ինչպէս ամէնուն ծանօթ է, Տէր Կոմիտաս քահանայի վկայութիւնը չորս պատերու մէջ, լռելեայն անապատի մը անկիւնը կատարուած չէր, ընդհակառակն Թուրքիոյ մայրաքաղաքին երեւելի հրապարակին վրայ եւ այն վկայութեան ամենամանրամասն պարագաները նոյն իսկ անուս եւ տղէտ մարդոց ալ ծանօթ էր, հետեւաբար կարօտութիւն չունէր մանրակրկիտ քննադատական դասի՝ իր մարտիրոսութիւնը հաստատելու համար: Ամէն ուղղամիտ մարդ կը հաւատար անոր հոգւոյն՝ երկրքի մէջ մարտիրոսաց դասուն մէջ կարգուելուն, եւ ինչպէս ժԱ. զլխուն մէջ ընթերցողները տեսան, սքանչելի հրաշքներու արժանացան իրեն զիմողները:

Այսու հանդերձ այս ալ ամէնուն ծանօթ է, ինչպէս գէթ ենթադրելու իրաւունք ունինք, թէ նոյն իսկ ուղղափառ եւ ճշմարիտ հաւատոյ վկաները, որպէս զի աշխարհին մէջ պատերազմող եկեղեցւոյն յարդանայր արժանանան, իրենց պատկերները կարելի ըլլայ խորաններու վրայ ցուցադրուիլ, իրենց մասունքները հաւատացելոյ պաշտօնապէս բաշխուին, եւ վերջապէս իրենց անուան աղօ-


թատեղիներ և եկեղեցիներ կանգնուին՝ ըստ նոր եկեղեցական կանոնաց, կարօտ են ենթարկուիլ անսխալ հռոմէական Ս. Եկեղեցւոյն վճռոյն, անցնելով պաշտօնական քննութեանց դատարանի բովէն:

Ուստի, ժամանակին երջանկայիշատակ Հասուն և Ազարեան Կ. Պատրիարքները, և իրենցմէ ետքը նախկին Կ. Պատրիարք Սապազադեան Տեառն Կոմիտասայ սրբացուցման դատը սկսած ըլլալով, վերջերս թէրզեան Գերերջմանիկ Կ. Պատրիարքը 1911ին, մինչ ի Հոռոմ էր, առաջիններուն ձեռնարկը յառաջ մղելու վերջին ճիգը թափած է: Ժամանակ մը եղաւ որ այս դատին վերաբերեալ պաշտօնական թուղթերը, Իտալիոյ աէրութեան գՀոռոմ գրաւելու շփոթութեան մէջ, դիւանաթուղթերու աստանդական տարուբերման պարագաներու տակ կորսուած համարուելով գրեթէ նոր սկզբնաւորութիւն տրուած էր դատիս. սակայն լուսահոգի Բուպեան Արքեպիսկոպոսի ջանքերովը նոյն պաշտօնաթղթերը երեւան հանուելով, շարունակութիւնը վերսկսաւ և Սիւնհոգոսակոյն Հարք իրենց 1911ի ի Հոռոմ գումարման ժամանակ ոչ սակաւ զբաղեցան այդ խնդրով:

Այդ խնդրոյն մէջ ընդհանուր Հայ Կաթողիկէ հասարակութիւնը, յարգոյ կղերը և ժողովուրդը պէտք է որ ունենայ իր գործնական մասը, այսինքն կատարէ երկու տեսակ պարտականութիւն, մին բարոյական, իսկ միւսը նիւթական: Նիւթականն է գրամական նպաստով օգնել թէ՛ Երանելոյն օրհնեալ գերեզմանին վրայ պատշաճ մատուց մը կառուցանելու և թէ՛ սրբացուցման անհրաժեշտ ծախքերուն սատարելու. իսկ բարոյական պարտականութիւնն աւելի նուիրական է: Արդէն ներկայ կենսագրութիւնը յօրինելուս զլիսաւոր նպատակն էր հասարակութեանս մէջ Երանելոյն յիշատակը արթնցնելով վերարծարծել հաւատացելոց ջերմութեանութիւնը, որ թերեւ ժամանակներու հոլովմամբ տկարացած ըլլայ. մղում մը տալ, և այն՝ թէ՛ իրենց և թէ՛ Երանելոյն շահուն համար: Իրենց շահուն համար, որովհետեւ շատ մեծ պէտք ունին ստէպ զիմելու անոր զօրաւոր

բարեխօսութեան, իրմէ ընդունելու համար այն բարիքը՝ որուն իրենց մէջ հետզհետէ զգալապէս պակսիլը իրենք ալ չեն կրնար ուրանալ, այն բարիքը, այն գերբնական շնորհքը կ'ըսեմ, որ ճշմարիտ Կաթողիկէի մը համար անհրաժեշտ է, այսինքն գործնականապէս դաւանել Կաթողիկէ հաւատքը, որումասին, աւանդ, շատեր, դարուս խաբեբայ քաղաքակրթութեան վարդապետութեանց հետեւելով, կը գրեն, կը մոլորին, և ուրիշներուն ալ, ապագայ սերունդին ալ չար օրինակ կ'ըլլան: Իրենց շահուն համար, որովհետեւ ամէն ճշմարիտ Կաթողիկէ անհատ, ինչպէս կը բաղձայ քաղաքական անդորրութեան, իւր հոգւոյն օգտին, նոյնպէս կը բաղձայ նաև հասարակութեանս խաղաղութեան, որ վրդոված է և հոգւոց քայքայում կը սպառնայ տեսակ մը հալածանքով որ անբաղդատելիօրէն տարբեր է Երանելի Տէր Կոմիտասի ժամանակը յարուցուած հալածանքէն, որով կրկնապատկուած ջերմութեանութեան մը դիմելու են Երանելոյն հպօր բարեխօսութեան: Իրենց շահուն համար, որովհետեւ նիւթապէս ալ մեծ հրաշագործութեանց կարօտութիւն ունին:

Վերջապէս նաև Երանելոյն շահուն համար, վասն զի Երանելի նահատակը կ'ուզէ որ իր արեւնակիցներն ալ իր օրինակին հետեւելով, հաւատոյ մէջ արիութիւն ունենան, սերս ու հաստատուն կապերով կապուած մնան Հոռոմէական Ս. Եկեղեցւոյ և իր բարեխօսութեամբ Աստուծոյ փառքը աւելնայ և ինք փառաւորուի առաջի փառաց արթնոյն Ամենասուրբ Երրորդութեան: Նաև Երանելոյն շահուն համար, որպէս զի իր բարեխօսութեամբ զործուած բարոյական և նիւթական նոր նոր հրաշագործութեանց շնորհիւ շուրջ երկու հարիւր տարիներէ ի վեր սպասած սրբացուցման վճռոյն արժանանայ:



Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԵՐՆ ՔԻՒՉԻՒՔ ՍԵՐՈՎՐԵՍԻ

BULLETIN

1911 սէնէսի Փետրվարին ծնունդը կիւնիւ, Թիւրէն շէնրինտէ 7 եաշնտա պիր չօծուգ էօլմիւշ տիր:

Ամենատուրս Հաղորդութիւնա օլան իպատէթի, քէնտինին «Ս. Հաղորդութիւնն քիւնիւ Սերովրէսի» իւնվանըլա եատ օլունմասընա սէպէպ օլմուշ տիր: Կիւնթալ-Մարի-Պրունինին հայաթընտա հէր շէյ մէշհուր իտի: Զէքեա ու Ֆէրասէթի միւքէմէլէսի սայէսինտէ, քէնտինին թալիմ իտիմիշ օլան շէյլէրաէն հիշ պիրիսինի ունութմամը տիր: Տէօրթ հաշնտա տիւշար օլտուղը պիր խասթէլիք էմնսընտա, սայքի խօծասըզ օլարագ օգուճալը էօլրէնմիշ տիր: Պուլունտուղը մէքթէպլէրտէ տախմա պիրինճիլի իհրագ էյլէմիշ վէ կէրէք հէմսինի օլան արգատաշլարը վէ կէրէքսէ եիւքսէք սընքի թալէպէսի թարաթընտան ումումէն սէվիմիշ վէ Ֆէվգ էլ առտէ պիր վիճուա կիպի թագտիր օլունմըշ տիր:

Փագաթ պու հէր տիւրլիւ էվսաթը ճէմիլէ իլէ միւթթասըք պուլընան նագիք չօծուղըն իպատէթ քեարլըղը, հայաթը ֆէվգէթթասիսի շայանը տիգգաթ տիր:

Տահա տօղմագտան էվվէլ, վալիտէսի օնը Ս. Հաղորդութիւնա սունմըշտը, վէ հագիգաթէն տէ ծնուն պիւթիւն էօմրիւ պու ազիլ էքմէք էթրաթընտա կէշմիշ տիր: Էօմրիւնիւն թա իլք սէնէլէրի, Ս. Հաղորդութիւն, Կիւնթալ-Մարի իշուն էն գիյատէ արգու իթտիյի շէյ, չօծուգընտա գուվվէթի, մէսէրրէթ ու սաատէթի, զահմէթ վէ խասթէլիքլէրի արասընտա թէսէլլիսի օլմուշ վէ շիմի օ թանըրըղը, կէօրտիւյիւ Յիսուս քէնտի էպէսի պախթիարլըղը օլմագտա տիր վէ էպէս իւլ ապատ տախի օլաճագ տիր:

Կիւնթալ-Մարի-Պրունի 1903 Մայիս 6տա Թիւրէնտէ տիւնեայա կէլմիշ վէ Ֆէրտասը կիւն տախի Ս. Մկրտութիւն շնորհքընա նաշիլ օլմուշ տիր: Էվլիտէն իքինճի չըգըշ տա Գիլիսա իշին օլմուշ վէ վալիտէսինին Հաղորդութիւն հուգուրընտա սէճսէյէ տէվամ

իթտիյի միւտտէթճէ սիւքութ վէ րահաթ տուրմըշ տիր: Ս վագըթտան իթիպարէն օնուն պիր քիլիսատա պուլունմագտան նէ՛ գատար մէմուն օլույօր օլտուղը ոնլաշլտը, տախի պիր թէպէսսիւմ, եօրուլմագսըղըն Տապանտկա պագմագ վէ սիմասընն բարլամասը կէօրէնլէրին թահթը թաստիգինտէ տիր: օրատա գաթիէն աղլամագտը վէ սահիպինին հուգուրընտա պուլունմագտան հիշ աւլա օսանմագտը:

Չօծուղը, Սալէգիլէնլէրին բէիսի օլան Տօն Բուլայա կէօթիւրտիւքլէրինտէ, պու գաթը միւնթէրէմ օնը միւպարէքլէտիքտէն սօնրա, ծնուն պիւնպիւթիւն մէտէթքեար Մարիամըն օլաճաղընը քէշֆ իտէրէք խապէր վէտի:

Իքի եաշնտա իքէն վարդարանընը սէյլէյէպիլիրտի: Օնուն իլք քէլիմէլէրի «Յիսուս, թաթըն Յիսուս» օլմուշ տիր: Էն պէյիլք մահուգիլէթի, վալիտէսիլէ պիրլիքտէ իլք պատարագտա հաղըր պուլընմագտա իտի:

Զաթէն Ս. Հաղորդութիւն խորհուրդընը անլամըշտը վէ, Յիսուս նէրէտէ տիր, սիւալընա՝ «Իշթէ՛ պուրատա, եիւրէյիմտէ վէ քիլիսատա Տապանալըն իշինտէ տիր» ճէվապընը վէրիւտի:

Իւշ հաշ վէ տէօրթ ալըզ իտի, պիր կիւն Հաղորդութիւն ալմագա կիտէն վալիտէսինին արգասընտան կիթտիյինտէ կէօլլէրի հաշ իլէ տօլու օլարագ օնա տէտի:

— Մամա, պէն տէ Հաղորդութիւն ալմագ իսթէրիմ:

Պունը եարամատըղը իշուն գալպի զայէթ պէյիլք քէտէր տույար վէ հէր վագըթ իշուն իլք Հաղորդութիւն ալաճաղը կիւնիւն սապահընը խայալլար տուրուրտը: Հաթթա օ վագըթտան իթիպարէն հէր կիւն իշին պիր քէրրէ Ս. Հաղորդութիւնա գիյարէթէ կիտէր վէ հոգեւոյալկան հաղորդութիւն եարարտը:

Ս. Պատարագա վէ քահանալարա պիր հիւրմէթի մախսուսէսի վար իտի:

Տէօրթ հաշնտա, Էնսիլիսիլիսի օն Տիվէն Բեօր մէքթէպինտէ պուլընտըղը վագըթ քահանալըղա չաղըրըլմըշ օլտուղընա տաիր պիր հիսսիյաթը վար իտի: շէյլէ քի րագս

տէրսի վերէն մուսլիմն «Պէն քահանայ օւլաճաղըմ, պինտէն ալէյի բողոս էօյրէնմէքտէ հիչ պիր ֆայիտէ կէօրմէյօրըմ» տէր իտի :

Հէր խասթէլիյէ տիւշար օլմադընը, Բապպըն պիր զիյարէթի կիպի թէլադըլ իտէր իտի : Տէօրթ եաշընտա սաթլիհճանա թուրթուլ-տուզընտա սօքթօրա շու սուրէթլէ սէօյլէ-միշ տիր :

«Էօլմէքլիյիմ, չիֆա պուլմազըլըմ գա-տար պէնի մէմնուն իտէճէք տիր, զիրա հէ-ման կիտիպ Յիսուսըմ գալուշաճաղըմ» :

Թապիաթը բէք աթէշի օլտուզընտան, քէնտի քէնտինէ գարը չօգ ճէնկլէշմէյէ ին-թիյաճը վար իտի : Ֆադաթ, բէյիալէրի նէֆ-սինին իւզէրինէ ինրազ իտէճէյի զալէպէ, Ս. Հաղորդութիւնա կէօպթէրէպիլէճէյի մու-հապէթին էն էյի պիր տէլիլ օլաճաղընը քէն-տիտինէ սէօյլէտիքլէրինտէն սօնրա, արթըգ հէր տիւրլիւ ճէհաի տիրիլ էյլէմէզտի :

Պու խուսուսատաքի միւլէֆֆադիյէթլէրի-նի հոգեւոր հայրընա հիքեայէ իթտիյինի վէ գալպինէ գապուլ էյլէմէք իսթէտիյի Ս. Հա-ղորդութիւնըն խաթըր իչին, ճանընըն քեաֆ-ֆէի տիւշմէնլէրինէ զալէպէ էյլէմէք պա-պընտաքի շէտիտ արգուլարընը իչիթմէք զա-յէթ խօշ աւալալտէն իտի :

Պէշ եաշընտա իքէն չօգ քէրրէ տէր իտի : «Պագընըզ, ինսանլար հայաթ իչին նէ գա-տար չալըշօրլար, հալպու քի քէնտիլէրէ ինթիզար իտէն էպէտիլիյի տիւշիւնէնլէր նէ գատար ազ տըրլար : Պու գատար ինսանլար արասընտա Յիսուսը տիւշիւնէնլէր նէ գա-տար ազ տըրլար : Զէվալլը ինսանլար, պու նէ տէրէճէ նանքէօրլիւք տիր» :

Քէնտի հէր վագըթ իչուն Ալլահը տիւ-շիւնիւրտիւ վէ ծնըն պու թէէմմիւլինէ հիչ պիր շէյ մանի օլմազտը : Քէնտիսի իչուն զա-յէթ սէվկիլի օլան պիր օլունը պրապըպ տէ-րին մսաճալան իլէ մէշղուլ օլմապ հիչ կիւճ պիր շէյ տէլիլտի : Մէքթէպտէ ճիտտէն չա-լըշըր վէ հէր պիր ինշա տէրսիստէն էվլէլ, «Եա՛ Ալլահըմ, մէսաիմի սանա թէվտի էյլէ-րիմ վէ հէր խուսուստա սէնին ինթիշամընը արգու իտէրիմ» տէր իտի : Զօճուզլարըն զա-լէթա եալսօս մէվպուլէլէր օգուստալնա՝

վագըթ զայ իթմէք տէր, վէ քէնտիսի սուրը-լարըն վարյընը վէ բուհանի քիթապլար օ-գուստալա վագըթ կէշիլիլ վէ օգուստալարը-նը թէէմմիւլ վէ թէֆէքքիւր իտէր իտի :

Տահա պէշ եաշընտա իքէն, չիչէք խաս-թէլիյինէ թուրթուլտըլընտա, պուլունտըլը հալը թանըր վէ էպէվիյինէ միւսթէրիհ օլ-մալարը իչուն ճէսարէթ վէրիւտի վէ, «Էօլ-մէզտէն էվլէլ իլք հաղորդութիւնըմ ալա-ճաղըմ, ա՛հ, շու խասթալըլըմ էմնասընտա Յիսուսը եիւրէյիմէ ալապիլսէմ, զահմէթլէ-րիմը նէ՛ գատար պաթիթիյարըզա չէքէճէք-տիմ» տէր իտի :

Կիւսթալ էօյրէնմէքսիլին քրիստոնէական վարդապետութիւնը պիլիյօրտը : Օ՛ պիր հա-յաթը ֆէվգէթթապլաթ մուհիթինտէ պու-լունտալար : Քէնտի իչուն սայքի հիչ պիր սըրր եօգտը :

Հաղորդութիւնա օլան արգուսը ծնը կիթ-տիքճէ էրիտիպ թիւքէտիյօրտը : Պիր չահա-նայ վասըթասըլլա Տօն Բուայա կէօթիւրիւ-տիւ վէ ծնուն իմթիհանը ուզուն սիւրմէտի :

— Զօճուզըմ, սանա «Առէք կերէքտէն սօնրա նշխարք պիր միւպարէք էթմէք տիր» տէյճէք օլտամ, նէ՛ տէրսին :

— Եօգ, վարդապետ, Առէք կերէքտէն սօնրա արթըգ էթմէք եօգ տըր, նշխարք Յի-սուս օլուր վէ թէքմիլ Յիսուս օլուր :

Տօն Բուա, 1909 Մայիս 23տէ ծնուն իլք հաղորդութիւնըն վէրտի : Պու մէնզարէ պիր մուհապլէթ թէճէլիսի իտի : Կիւսթալըն սի-մասը բարլայօր, կէօլլէրինտէ աթէշ լէմա-լարը նիւմահան օլույօր վէ տուտաղլարը պիր թէպէսսիւմը սէմալի իլէ կիւլիւյօր իտի :

Ֆէրտասը կիւնիւ սէ հաղորդութիւն ալ-տը վէ ծնտան սօնրա բուհինին էն պէօյիւք աղապը, հէր կէւն սէվկիլիւ Յիսուսընա գա-վուշամամասը իտի, պու սէպէպտէն միւ-ստատէ օլուննա հէր ֆըրտաթտան իսթիֆա-տէ իտէր վէ հաղորդութիւն ալըր իտի :

Նիրմը կիւն սօնրա Դրոշմ խորհուրդը վա-սըթասըլլա Հոգին Սուրբըն լութֆլարընա տա-մազհար օլտու : Արթըգ ծնուն էօմրիւ հա-ղորդութիւնա հաղըրըզ կէօրմէք վէ թէշէք-քիւր իթմէքլէ կէշէրտի :

Դալպինտէքի հարարէթինի իզհար էյլէ-մէք իչիւն «Ա՛հ, Յիսուս նէ՛ գատար էյի տիր քի պէնի պու գատար սէվիյօր» տէր իտի :

(Մապալի վար)

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՆԻ

Թարգմանեց
ԽԱՉԻԿ Վ. ԱՅՆԱՍԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՇԵՂԻՆԱԿԻՆ

ՍԵՆ ՍԻՐԻ հռչակաւոր յարկը գլխաւորաբար հաստատուած ըլլալով թագաւորութեան ամէն կողմերէն հաւաքուած բազմութիւն դեռատի օրիորդներուն բարեպաշտական դաստիարակութիւն սալու համար, հոն պակաս թողուած չէ ինչ որ կրնայ նպաստել զանոնք տրամադրելու որ Աստուծոյ ծառայեն այլ և այլ վիճակներու մէջ, որոնց պիտի կոչուին Ասոր հաճութեամբ: Հոն էական և կարեւոր բաներէն զատ կ'ուսուցուի նաև ինչ որ կրնայ անոնց միտքը ազնուացնել և դատողութիւնը կերպաւորել: Ասոր համար հնարուած են շատ միջոցներ, որ, առանց ետ կեցնելու զանոնք իրենց աշխատութենէն և սովորական հրահանգներէն, զուարճացնելով կը կրթեն, կամ, այսպէս ըսելու համար, անոնց զրօսանքի ժամերը օգտագործել կուտան. անոնց գլխաւոր պարտքերուն վրայ յատկապէս կանխաւ յօրինուած կամ նոյն միջոցին իրենք իրենցմէ յօրինած հանճարեղ խօսակցութիւններ ընել կուտան. զանոնք կը խօսեցնեն իրենց կարգացուած պատմութիւններուն կամ ուսուցուած կարեւոր ճշմարտութիւններուն վրայօք. անոնց բերանացի զուրցել և արտասանել կուտան հոյակապ բանաստեղծներու ամենէն գեղեցիկ հատուածները. և ասիկա անոնց միջոց մը կ'ըլլայ ուղղելու գաւառներէն հետերին բերած շատ մը յոռի արտասանութիւններ: Փոյթ կը տարուի նաև լուսնային ունեցողները երգի վարժեցնել. որպէս զի չըլլայ թէ կորսնցնեն սաղմոս մը, որ կրնայ զիրենք անմեղօրէն զուարճացնել, և զոր կրնան օր մը գլխաւորաբար գովելու գործածել:

Բայց որովհետեւ մեր լեզուին ընտրեալ գոյն քերթուածներէն շատերուն նիւթը անսուրբ և աշխարհային է, և մեր ամենագեղեցիկ եղանակներուն խօսքերը յետին աստիճանի մեղկ և կնատ են, և կրնան մատաղ մտքերու վրայ վնասակար տպաւորութիւններ ընել. ասոր համար այն ականաւոր անձինք որ հաճեր են այս յարկին վերատեսչութիւնը ձեռք առնուլ, փափաքեցան որ գտնուի երկասիրութիւն մը, որ առանց ունենալու այս բոլոր թերութիւնները, կարենայ նոյն լուսնային քերթները մասամբ յառաջ բերել: Պատուեցին զիս գաղափարնին ինծի հաղորդելով և միանգամայն առաջարկելով որ արեւօք կրնամ բարեպաշտական եւ բարոյական նիւթի մը վրայ յօրինել այնպիսի քերթուած մը, ուր երգը խառնուած ըլլայ զրոյցին, եւ ամբողջը կապուած ըլլայ՝ գործին կենդանութիւն ստեղծելու և անոր տաղտկալիութիւնը նուազեցնող գէպքով մը:

Իրենց առաջարկեցի Եսթերի նիւթը, որուն վրայ անմիջապէս հիացան տեսնելով որ այդ պատմութիւնը գլխաւորաբար սխալու եւ աշխարհի մէջ իսկ աշխարհէ անջատուելու մեծ դասերով լի է: Ես ալ իմ կողմանէս նկատեցի որ այս նիւթին վրայ գրելու բաւական զիւրութիւն պիտի ունենամ. մանաւանդ որ ինծի այնպէս երեւցաւ թէ, առանց ո եւ է կերպով այլալիւու Ս. Գրքին նշանաւոր պարագաներէն մին, ինչ որ, իմ կարծիքովս, տեսակ մը սրբապղծութիւն պիտի ըլլար, պիտի կարենայի ամբողջ գէպքս լիովին ներկայացնել մինակ այն տեսարաններով, զորս, այսպէս ըսելու համար, Աստուծոյ ինքնին պատրաստած է:

Ուստի գործի ձեռնարկեցի, և սեսայ թէ ինծի տուած յատակագծին վրայ աշխատելով, կ'իրագործէի կերպով մը այն ծրագիրը, որ շատ անգամ մտքէս անցեր էր, որ էր կապել, ինչպէս յունական հին ողբերգութեանց մէջ, երգչախումբն ու երգը գէպքին հետ, և ճշմարիտ Աստուծոյ օրհնելու յատկացնել խմբագրութեան այն մասը, զոր հեթանոսք կը գործածէին իրենց սուտ Աստուածները գովելու:

ձիւղը ըսելով, ևս չէի կարծեր թէ ներկայացումը անքան հրապարակական պիտի ըլլայ: Բայց Ս. Գրքին մեծ ճշմարտութիւնները և այն վսեմութիւնը որով անոնք բացատրուած են հոն, բաւական է որ մարդոց ներկայացումը, նոյն իսկ թերի կերպով, ա՛յնքան յարմար են հիացնելու և ասկէ զատ այն դեռատի օրիորդները այնչափ վայելչութեամբ, համեստութեամբ և բարեպաշտութեամբ արտասանեցին և երգեցին այս երկը, որ անկարելի եղաւ նոյնին իրենց յարկին տակ ծածկուած մնալը. այնպէս որ տղոց զբօսանքին նիւթը հրապուրեց, առինքնեց ամբողջ պալատը. թագաւորը ինքնին ա՛յնքան յուզուեցաւ ներկայացումէն, որ չկրցաւ իր մեծ իշխանները անոր չհրաւիրել, և գոհութեամբ տեսաւ, անոնց հոն զգացած հաճոյքով թէ մարդ կրնայ բարեպաշտական ներկայացումներով ալ զուարճանալ, ինչպէս կը զուարճանայ աշխարհային տեսարաններով:

Դարձեալ, թէ եւ խնամով զգուշացայ նշանակաւ իրաց հետ անսուրբ իր խառնելէ. սակայն կարծեցի թէ կարելի է Հերոդոտոսէն երկու երեք գէպեր առնուլ՝ Արտաշէսը լաւ եւս նկարագրելու համար. որովհետեւ հետեւեցայ Ս. Գրոց շատ մը իմաստուն մեկնիչներու կարծիքին, որոնք կը համարին թէ այս թագաւորը այն Վշտասպի որդի երեւելի Դարեհն է, որուն վրայ կը խօսի նոյն պատմագիրը: Արդարեւ այս մասին շատ փաստեր կը բերեն, որոնցմէ մէկ քանին ինծի ապացոյցներ կը թուին: Բայց պատշաճ չհամարեցայ հաւատալ Հերոդոտոսի այն խօսքին թէ՛ Պարսիկները իրենց աստուածներուն չէին կանգներ ո՛չ տաճար, ո՛չ սեղան և ո՛չ արձան, և իրենց գոհերուն մէջ ըմպելի չէին նուիրեր: Անոր այս վկայութիւնը յայտնապէս կը հերքուի Ս. Գրքէն, ինչպէս նաեւ Բաննովոնէն, որ Պարսից բարքերուն և գործերուն աւելի հմուտ է, և վերջապէս Կուլինտոս-Կուրաթոսէն:

Կրնայ ըսուիլ թէ տեղւոյ միտ թիւնը պահուած է այս թատերախաղին մէջ, ըստ որում ամբողջ գործը տեղի կ'ունենայ Արտաշէսի պալատին մէջ: Սակայն, որովհետեւ

կ'ուզուէր տղոց աւելի զուարճալի ընել այս ժամանցը՝ զարդարանքի մէջ զանազանութիւն խառնելով, անոր համար այս միութիւնը չպահեցի այնպէս ճշգրէն ինչպէս ատենով ողբերգութեանց մէջ ըրած էի:

Կարծեմ թէ լաւ է զեկուցանել հոս որ, թէ եւ Նաբեի մէջ այլ անձեր կը գտնուին, սակայն օրիորդներ կրցեր են զանոնք ներկայացնել իրենց սեռին պատշաճ վայելչութեամբ և այս՝ չա՛տ դիւրաւ, քանի որ հին ատենները Պարսիկք և Հրեայք երկայն և մինչև գետին հասնող պատմութեաններ կը հագնէին:

Ձեռ կրնար վերջացնել այս յառաջաբանը առանց շնորհակալութեան պարտքս հատուցանելու անոր որ երաժշտական եղանակները յօրինեց, եւ առանց անկեղծօրէն խոստովանելու որ իր երգերը թատերախաղին մեծ հրապոյր տուին: Ամէն հմուտները միաբան կը վկայեն թէ երկար ատենէ ի վեր երբէք չեն լսուած աւելի արտաշարժ եւ աւելի խօսքերու իմաստին յարմար եղանակներ: Վերջին խմբերգութիւնը թէ եւ շատ գեղեցիկ, բայց քիչ մը երկայն թուեցաւ ոմանց: Սակայն ի՞նչ պիտի ըսուէր այն իսրայելացի մատաղ օրիորդաց, որ Աստուծոյ այնքան ուխտեր ըրած էին վերահաս ահռելի վտանգէն ազատուելու համար, եթէ, այս վտանգին անցնելէն յետոյ, Անոր հարեւանցի կերպով գոհութիւն մատուցանէին: Անոնք ուղղակի մեղանշած պիտի ըլլային իրենց ազգին գովելի սովորութեան գէժ, ուր Աստուծմէ ընդունուած ամէն նշանաւոր բարիքի փոխարէն՝ անմիջապէս գոհութեան երկար երգեր կ'ընծայուէին Անոր. վկայ ըսածիս Մարիամու, Մովսէսի քրոջ, Դերովրայի, Յուդիթի եւ ուրիշ շատերու երգերը, որոնցմով Ս. Գիրքը լեցուն է: Կ'ըսուի թէ Հրեաները հիմայ ալ գոհութեան մեծ արտայայտութիւններով կը տօնախմբեն այն օրը, ուր իրենց նախնիք Նաթերի ձեռքով ազատուեցան Համանին անգլութենէն:

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՐՆԵՒ

ՏՕՆԱՑՈՅՑ

- Յուլիս 6 † Կիր. ակ. Բ.— Ձկնի Վարդավառի
 7 Բշ. քմ. Կիպրիանոսի եպ. ին եւ Յուս-
 սինայ կուսին
 8 Դշ. քկ. 45 վկայիցն եւ սրբոց կուսա-
 նացն եւ փիմեայ եւ Քրիս-
 տինայ
 9 Դշ. գմ. Պանոց
 10 Եշ. գկ. Սրբոց Նախահարց
 11 Ուտր. դմ. Պանոց
 12 Շք. քկ. Սահակայ եւ Յովսէփայ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

(Շար. եւ վերջ)

Ս. Գրիգոր երբ տեսաւ քրիստոնէութեան ամբողջ
 Հայաստանի մէջ հաստատուելը եւ ծաղկելը, Աղբիւսնոս
 աստուածասէր եպիսկոպոսը արքունի դրան վերակա-
 ցու գրաւ եւ ինքը ելաւ անապատ լեռները, ուր եր-
 բեմն մինակ եւ երբեմն իր աշակերտներէն ոմանց հետ
 կը ճգնէր խոտաբուստ կեանքով, կ'ընթեռնուէր հոգե-
 պատում գիրքեր եւ անդադար կ'ազօթէր ժողովրդեան
 համար: Մերթէ ևս քաղաք կ'իջնէր եւ Ս. Արիստակէ-
 սին եւ իր միւս օգնականներուն հետ բոլոր թեմերը
 կ'այցելէր եւ ժողովուրդը կը քաղալէր, կը յորդորէր
 յարատեւելու ճշմարիտ հաւատքին մէջ:

Նոյն ատենները, Հռոմի ինքնակալը Մեծն Կոս-
 տանդիանոս դարձաւ քրիստոնեայ եպաւ: Տրդատ, որ
 ի մանկութենէ կը ծանօնար Կոստանդիանոսը, եւ Ս.
 Գրիգոր ելան մեծաշուք ուղեւորութեամբ դա-
 ցին Հռոմ, ողջաբուրեցին նոյն աստուածապաշտ թա-
 գաւորը եւ Ս. Սեդրեատրոս քահանայապետը, որոնք
 զիրենք մեծ սիրով ու պատուով ընդունեցան:

Երկու թագաւորները բարեկամութեան եւ զի-
 նակցութեան դաշինք կուեցին իրարու մէջ: Ս. Սեդ-
 րեատրոս իր քահանայապետական իշխանութեամբ
 տուաւ Ս. Գրիգորի Հայոց Պատրիարքութեան պա-
 տիւրը Այնուհետեւ Հայոց թագաւորն ու Պատ-
 րիարքը մեծահանգէս շքով դարձան Հայաստան:

Այն միջոցին գումարուեցաւ Նիկիոյ տիեզերա-
 կան Ս. Ժողովը, որուն հրաւիրուեցաւ նաեւ Ս. Գրի-
 գոր. բայց որպէս զի չըլլայ թէ պատուուի իր կրած
 տանջանքներուն եւ կատարած տիեզերահաշակ գոր-
 ծին համար, յանձն չառաւ երթալ: Թագաւորին հետ
 խորհրդակցելով զրկեց իրեն սեղ Ս. Արիստակէսը, որ
 ժողովին ներկայ գտնուելով անոր բարձր կանոններն ու
 հրահանգները առաւ բերաւ Հայաստան: Ս. Գրիգոր
 նոյն կանոններուն վրայ աւելցուց իր երկրին համար
 կարեւոր տեսած ինչ ինչ կէտեր, եւ հանգանակին վեր-

ջը յարեց իսկ մեկ փառաւորեցում որ յառաջ քան
 զյաւիտեան երկրպագանելով Ս. Երրորդութեան եւ մի
 աստուածութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ
 եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից. ամէն:

Այնուհետեւ Ս. Գրիգոր սկսաւ ինքզինքը բոլոր-
 լովին մենակեցութեան տալ եւ գրեց սքանչելի Յա-
 ճախապատումը, ի ռզգափաւ հոգեկից եւ ազգու-
 վարդապետութեամբ: Վերջապէս իրեն վերջին ճգնա-
 րան ըրաւ Սեպուհ լեռան վրայ գտնուող Մանեայ
 պլքը, 33 ին. եւ այլ եւս մէկու մը չերեւցաւ եւ սուրբ
 մահաւոր առ Աստուած փոխուեցաւ:

Եօթը հոյիւս գտնիկա վախճանած գտան նստած
 դիրքի մէջ, եւ շուրջը գտնուած սրբապան առաքի-
 ներէն հասկնալով անոր աստուածապաշտ անձ մը ըլ-
 լալը, անոր շուրջը պատ քաշեցին ու վրան գմբէթով
 ծածկեցին:

Ժամանակ անցնելէն վերջը Ս. Գրիգոր երեւցաւ
 Պառնիկ անուանով ճգնաւորի մը եւ հրամայեց որ իր
 նշխարները հանէ եւ տանի թաղէ Թորգան գիւղը:
 Պառնիկ կատարեց այս հրամանը եւ նոյն միջոցին
 շատ հրաշքներ եղան շնորհիւ Ս. Գրիգորի նշխարնե-
 րուն:

Թորգանէն Ս. Գրիգորի նշխարները տարուեցան
 Վաղարշապատ, Գուշին, Հռոմիլայ, Սիս, Պղիս եւ ու-
 րիշ շատ տեղեր, մինչեւ Իտալիա, Նէապոլիս, ուր կը
 գտնուի արդ Սուբբին գլուխը, որ կը պահուի իր ան-
 ուամբ շինուած եկեղեցւոյն մէջ արծաթէ տուփով:
 Շատ քաղաքներու եւ գիւղերու մէջ կը գտնուին Ս.
 Գրիգորի անուամբ եկեղեցիներ եւ մաս մը անոր Ս.
 նշխարէն, զոր թէ՛ արեւելքի մէջ եւ թէ՛ արեւմուտքի
 մէջ ջերմեանդութեամբ կը յարգէ ժողովուրդը եւ
 մեծ բարիքներ կ'ընդունի բարեխօսութեամբ Ս. Գրի-
 գորի, որ իր զիւցազնական արիւթութեամբ եւ առաքե-
 լական սուրբ եռանդովը աշխարհ միլիոն ժողովուրդ
 մէկէն քրիստոնէութեան դարձուց, անյիշատակ բնա-
 ջինջ ըրաւ Հայաստանէն կապալաւորութիւնը, մեհ-
 անները, բազմիները եւ ամէն կողմ ճշմարտութեան
 լոյսը սփռելով արժանացաւ Լուսաւորիչ գերազանց
 անուան:

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՐՆԻ“ ԳՐԲԷՆ

Գլխի Ա.—Իւ. ԺԱ.—Խաղաղութիւնն ստանալու
 եւ յառաջդիմութեան եռանդին վրայ: (Շար.)

Երբ պնդագոյնս քանային՝ իբրեւ արք գորութեան,
 հաստատուեւ մնալ կուռոյ մէջ, անշուշտ Աստուծոյ օգնու-
 րիւնը մեր վրայ պիտի ձեւեկին յերկնից:

Քանզի կուռոյներուն եւ յոյսերին իր շնորհիւ
 վրայ դնողներուն պատաստ ե ինքն օգնել, քանի որ
 ինքն եւ որ մեզի պատկաւովն առիթներ կը մատ-
 կարարէ որպէս զի յաղթեն:

Երբ միայն այս արտաքին հրահանգաց մէջ կը կայացնենք կրօնաւորական յառաջդիմութիւնը, շուտով վերջ պիտի գտնէ մեր ջերմեռանդութիւնը:

Բայց ծաղրաբար արմատն զարնենք, որպէս զի կըրնէրէ մահաւանդ, հոգւոյ խաղաղութիւնը ստանալ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

AMIDUCLRGH

Ձանազան հարցեր

Հ.—Մենք հոս կ'ազդենք կրօնական լայն թղթատուութիւն ունեցող երկրի մը մէջ: Երբեմն կը պատահի որ Կաթողիկէներէն ունենաւ, տեսնելով թէ Բողոքականք մեզի համակրութիւն ցոյց կու տան և մեր ձեռնարկներուն մէջ մեզի կ'օգնեն, կը կարծեն թէ իրենք ալ կրնան անոնց ձեռնարկներուն ձեռնտու ըլլալ: Երբ այդ ձեռնարկները մարդասիրական հանգամանք ունենան: Ահաւասիկ նաև շոշափելի դէպք մը, որուն մասին մեզի գիւղին պիտի ըլլայ աստուածաբանական որոշում մը առաջ:

Տուն մը կամ որբանոց մը, անկիւնային եկեղեցւոյ հակողութեան տակ, կը հաւաքէ աղքատ կամ որբ ազատներ և անոնց կու տայ բոլորական դաստիարակութիւն, — ինչպէս մեր վանքերը կաթողիկէ կրթութիւն կու տան իրենց յանձնուած լքուիւ տղոց:

Յերջերս մարդասիրական հանգէս մը արուեստաւոր նպատակով այդ անկիւնային որբանոցին, տիկնոջ մը տանը մէջ որ այդ ձեռնարկին շատ հոգ կը տանի. (և ոչ թէ բողոքական պաշտօնավարի մը մէջ):

1. Ինչ ըսելու է այն Կաթողիկէից մասին, որ կը համարին թէ կարող են մասնակցիլ այս հանգէսին: Պէտք է գտնաւորել իրենց բարի հաւատքին մէջ թողութիւն: Պէտք է միտքերնին լուստաւորել: Չափազանց խտուրթիւն ըրած կ'ըլլանք եթէ գտնաւորենք եկեղեցւոյ խորհուրդներէն:

2. Ինչ ըսելու է և ինչ խորհուրդ է քահանայի մը մասին, որ այդ հանգէսին ներկայ կը գտնուի և այնպէս իր ազդեցութեամբն ու գրաւորով այդ ձեռնարկը կը քաջալերէ:

Պ.— Պիտո՞ւ ժ. Գերմանիոյ եպիսկոպոսաց ուղղած Singulari quadam շրջաբերական կոնդակին մէջ կը յիշեցնէ այն, քիչ մը մոռացութեան մատուցած սկզբունքները, որ կանոնաւորելու են Կաթողիկէներու այլազանից հետ ունեցած ընկերական յարաբերութիւնները: Կոնդակը, ստոյգ է, աւելի նկատի կ'առնու սենսիզա անունով ծանօթ

բանուորական, արուեստագիտական ընկերակցութեանց պարագան: Բայց անոր պատճառարանութիւնը՝ բուն առարկայէն, սենսիզաական մասնաւոր նիւթէն աւելի հեռուն կ'երթայ:

Հիմնապէս այս բոլոր գործնական խնդիրները նիւթական գործակցութեան ի շարն և մեղաց առթի ընդհանուր հարցերուն տարբերակներն են:

Անհանդուրժողութեան ի յառաջագունէ և բացարձակ սկզբունքով չէ որ եկեղեցին իր գաւակներուն կ'արգելու ինչ ինչ յարաբերութիւններ, այլ որովհետեւ այդ յարաբերութիւնները կը նկատէ կասկածելի, վրտանգաւոր, գայթակցեցուցիչ կամ գոնէ պատահական առիթ՝ վարդապետական կամ բարոյական վնասի մը, որ կրնայ հասնիլ հաստացելոց:

Արդ՝ այս հաղորդակցութեանց մէջ վէճի առարկայ ըլլալ կրցող վնասին հաւանականութիւնը և ծանրութիւնը կշռադատելն ու որոշելը շատ փափուկ խնդիր մըն է, որովհետեւ շատ դժուար է ըմբռնել զայն իր ներկայ և ապագայ ամբողջ հանդամանքներովը միանգամայն: Եւ հոս դժուարութիւնը կը կրկնապատկուի հրապարակային ընկերական կարգի տեսակէտէն, որ կրնայ պարտաւորել առանձնական շահերը հանրային բարիքին զոհելու, կ'ուզենք ըսել, ետ կենալու որոշեալ գործէ մը, ոչ թէ անոր որոշեալ անձի մը համար ունեցած անպատեհութիւններուն համար, որոնք թերեւս բացարձակապէս ոչինչ են, այլ հանրային կարգի վնասակար ազդեցութեան համար, զոր այդ անձուն հաղորդակցութեան տեսարանը շրջակայից մաքին ընթացքին վրայ կրնայ գործել:

Ուստի պէտք է քիչ մը բարձրանալ անհատականութիւններէ և խղճարանական պատահական դիպուածներէ վեր: Որպէս զի կարելի ըլլայ միահաղոյն աչքի առջև ունենալ խնդրին ամբողջ պարագաները և լուծել զայն իր բոլոր հանգամանքներուն համեմատ:

Մէկըի՝ թողունք միջազաւանային խառն զովողութիւնները (syndicats) որ Ս. Աթոռէն դատապարտուած են, և մեր թղթակցին

առաջարկած նիւթէն ալ դուրս են : Տեսնե՛նք, լոյսով Syngulari quadam Շրջաբերականին և բարոյական աստուածաբանութեան, թէ ի՞նչ ըսելու է առաջիկայ դիպումներն մասին :

Մասնակցիլ բարի գործի մը, որքան գերազանց ալ ըլլայ այն ըստ ինքեան, բնապէս և նոյն իսկ գերբնապէս, կրնայ անշուշտ արգիլուիլ ըստ պատահման մահու չափ մեղքով, երբ այդ գործին մասնակցութիւնը՝ կրնայ հետը բերել բարոյապէս ետերելի յարակիցներ, որոնցմէ զգուշանալու է :

Երկու վտանգ կը յատկանշեն այս ըստ պատահմանը . վտանգ վաթարութեան՝ իր հաւատքին թշնամեաց հետ շփման մէջ մշտնոգ կաթողիկէին համար . վտանգ գայթակղութեան՝ շրջակայից համար . ուրիշ բաներով վնասի առիթ անձին համար, վնասի առիթ այլոց համար :

1. Վնաս անձին համար .— Այս վնասը աւելի կամ նուազ հաւանական և ծանր է, բայց վերջապէս դժուարախոսելի : Հաւատքի ուղղափառ մաքրութիւնը վասակելիք մը չունի, ընդհակառակն շատ տուժելիք ունի այս շփումներէն, որ, ընկերականութեան անկիւնները ընդարձակելու արտաքին երեւոյթին տակ, կ'ընդարձակին նաև, մաշեցնելով, կաթողիկէ վարդապետութեան ուղիւ անկիւնները և վերջապէս զայն սպառնալ վիճակի մը կը հասցնեն, այնպէս որ, կամաց կամաց, ինչ որ ալ ըլլուի, անխուսափելիօրէն կը ձգտի յարմարելու ապրած միջավայրին : Բարոյական ներգործութեան ազատականութիւնը արդէն վտանգ մըն է, որչափ աւելի մեծ և երկիւղալի է մտածումի ազատականութեան ներգործութիւնը, որ, այս կաթողիկէ կրօնի թշնամեաց հետ տեղի ունեցող յարաբերութեանց մէջ, վերջապէս կը ջլատէ վարդապետական ուղղափառութիւնը, որ սակայն կարեւոր է առ փրկութիւն, ամէնէն լու հաւատացեալներու :

Սղէկ չէ, մեծ անխոհեմութիւն է հրաւիրել սղու մը ակնարկը ամենապեղեցիկ շրջանակի մը վրայ, որուն մէջ զրուած է խայտառակ նկար մը : Բողոքականը և իր մարդասիրական ձեռնարկը, ահա՛ շրջանակը . իր

հաւատքը, եկեղեցւոյ դէմ ունեցած թշնամութիւնը, վերջապէս իր մոլորութիւնը, ահա՛ նկարը : Անոր գեղեցիկ զարդարանքին հրապուրիչ նկատումը վերջը վերջը կը վարժեցնէ աչքը որ պատկերը նուազ խորշելի գտնէ, և անդգալաբար կ'անցնի մարդ անձնական համակրութենէն, գաղափարներու նրկատմամբ նուազ հակակիր զգացումը մը :

Վարդապետական ճշմարտութեան և դրուած արգելքներու մասին կասկածը հեռու չէ : Ի՞նչ կ'ըլլայ այն ատեն . ո՞վ կրնայ թրւել այն կաթողիկէները որ այսօրինակ բողոքական յարաբերութիւններէ դարձեր են իրենց հաւատքին մէջ դեղեւած, կամ գոնէ քիչ մը ստանաւ իրենց հաւատքը ըմբռնելու անիրաւախոհ եղանակին մէջ : Շատ զգուշութիւն պէտք է ճշմարտութեան և առաքինութեան անարատ աւանդը մաքուր պահելու համար, զոյգն բան մը բաւական է զայն աւելու, զայն խաթարելու երբեմն աննորոգելի կերպով :

Եկեղեցւոյ այս մասին ազատ-փոխանակիչ չէ այլ թունգ պաշտպանական է . և յայտնի է թէ ո՛րչափ մեծ պատճառներ ունի այսքան նախանձախնդրութեամբ փաշտպանելու իր հաւատացելոց հաւատքն ու առաքինութիւնը օտար հպումներու գրեթէ անխուսափելի, աղիտարեւր ազդեցութեան դէմ :

(Շարունակելի)

ԳԱԹՕԼՈՒԻ ՄԵՉԶԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ (*)

(Տեվամի)

Էյէր Սլլահ եօգ իսէ, 40 եախօտ 60 սէնէ վահմէթ չէքմէք, հէր տիւրլիւ մէշազգաթա հէտէֆ օլմագ, չալըշմագ, եօրուլմագ, պիր գաշ ալ տա պիր խաթթախանէ քէօշէսինտէ ինլէտիքաշէն սօնրա էօլիւպ գուրտլարա եէմ օլմագ իշուն տօղմայա նէ՛ լիւզում վար : Աճէպա Սլլահ եօգ տըր տէյէն զալիմ սօֆիսքլէրին, ծնուն ետրինէ պիլզէ վէրէճէք նէլէրի վար տըր : Էյվահ, ծնլարըն սաատէթ կիպի,

(*) Տես թիւ 400, էջ 398 :

ճէննէթ կիպի պիզէ թէքլիֆ իթտիքլէրի՝ սէրխօլլըզ վէ սէֆահէթտէն պաշգա պիր շէյ տէյիլ տիր։ Ձէվալլըլա՛ր . . . :

Սէմայա տօղրու պիր կէօլլէրի՛նի գալաւը-րըպ տա Ալլահա, եա՛ Բէտէր, ճէննէթինին իւմիտիյլէ չալլըան, եօրուլան, զահմէթ չէ-քէն էվլատլարընը տէր խաթիր էյլէ, տէմէք տահա էվլա տէյիլ մի։

2. Աքէիզմ աճապը ումուլիյէյի sk մահվ ու քալսիպ էյլէր։ էյէր Ալլահ եօգ իսէ, վա-ղիֆէյի մէնպուրի գըլան պիր հիւքիւմէթ է-յիլէրէ միւքեաֆաթ վէ ֆէնալարա միւնա-նազաթ վէրէն հիչ պիր ատալէթի նա միւ-թէնահիյէ գալմազ, վէ պու սուրէթլէ, պա-րը վազիֆէյի իւզէրինտէն աթմըլ օլան, ճէ-զա գօրգուտունա, միւքեաֆաթ իւմիտիյէ պիկեանէ գալմըլ պուլունան ինսան մութ-լազա նէֆսի էմմարէսի արգասընտան կիտէր վէ արթըզ հիչ պիր մօրալ էսէրի գալմազ։

Մօրալ տէտիյիմիզ, մութլազա պիր գա-նունը հայաթ տըր, էօյլէ պիր գանունը հա-յաթ տըր քի, իրատէթի ճիւզիյէյէ մալիք օլան պիր մախլազա պազը շէյլէր թէնպիհ վէ պազը շէյլէր տէ կասագ իտէր։ Հէր գա-նուն կիպի պու գանունը հայաթըն տա, օնը մէնպուրի գըլան պիր վազիի գանունը, օնը թաթպիզ իտէն պիր հալիմի, օնը մուհաֆա-զա իտէնլէրէ միւքեաֆաթ վէ եախօտ օնըն խիւսֆընտա պուլունանլարա պիր միւնազաթ իտիճիսի վար տըր։ Ալլահըզ, նէ՛ վազիի գանուն, նէ հաքիմ, նէ՛ էրպապը ֆազիլէթի միւքեաֆաթլայան վէ նէ տէ սէյիաթը միւ-նազաթլայան գալմազ, ինսան քէնտի քէն-տինէ վէ քէնտի արզուլը պաթըլընա մէթ-րուք գալըր։ Գանունը ախլազըն պիր քաթ-պիզ իսիհիսի օլմայըննա, արթըզ հիւքիւմ-սիւզ պիր հալէ կէլիր, վէ, հէր ճէհու ու իզ-տամ վէ կա պիր ֆէտաքիարըզ լիւզումը թազաթիլնտէ քայիմալ իտիլիր։

— Եա վիհնան ցէրէսէ գալմըլ սըր, տէ-նիլէճէք տիր։

— էյէր պիր շէյի թէնպիհ վէ կա նէհի իտէն վիճաան Ալլահըն սէտաթը օլմազսա, օ-նուն նիտաթընը չապուզ պասթըրըրըզ վէ իթաաթ իթմէյիզ։ Վիճաան, պիր պէօյիւք

նաթընա սէօյլէմէտիքճէ, ատէթա պիր օյուն-նազ տէմէք տիր։ էյէր Ալլահ եօգ իսէ, է-մի՛ն օլունուզ քի պէնիմ վիճաանըմը մէն-պուր էյլէյէն հիչ պիր գանուն պուլամայա-նազընըզա պէն սիզի թէէմի՛ն իտէրիմ։ Հէ-վայի նէֆաանիյէմի իճրա իթմէքտէն պէնի քիմ մէնն իտէպիլէճէք տիր։ Պէնիմ կիպի տիկէր պիր ինսանըն կէլիպ տէ պանա էմը վէրմէյէ, հուրրիյէթիմի թահաթա էյլէմէյէ նէ՛ հագգը օլանազ տըր։ Հէր տիւրլիւ հու-գուզ վէ վէզայիֆ ֆիքրինին մէնշաը Ալլահ տըր։ Ալլահըզ, պիր չօճուգ՝ ֆէնա պիր էվ-լաո, ֆէնա պիր պապա, ֆէնա պիր գէվճ, ֆէնա պիր թէպաա, էն աաթի պիր շէրիւր վէ ինսանլարըն պէտթէրի օլանազ տըր։ Տէլի-գանլըլըլնտա ախլազըզ, պինի քէմալըն-տա վիճաանըզ, իսթիյարըլընտա հիսսի հիճապտան պի պէհրէ վէ հալը ինթիզարըն-տա նա իւմիտ օլանազ տըր։

3. Ալլահըզ ցէմիյէրի պէհէրիյէ միւմֆիմ-սիզ սիր։

Գանունլար վազ էյլէյէն պիր հիւքիւմիք վազ օլունան գանունլարը հըֆզ իտէն իրաաթ վէ էֆրատը արատընտա ֆեզայիլի ինքիմալիյէ մէվճուտ օլմաթըզնա, հիչ պիր ճէմիյէթ գա-յիմ օլմազ։

Հալպու քի, Ալլահըզ; ճէմաաթ բուէս-սաթը ինտինաէ ֆիքրի ատալէթ գալմայըպ, մահզա քէնտի մէնաֆի վէ հէվայի նէֆաա-նիյէլէրինի թազիպ վէ թէէմի՛ն իտէն միւն-թէպիսլէր օլուրլար։ Թէպաա, հիւքիւմէթէ գարըլ օլան հիւրմէթէ վէ գալմանիյնը մէվ-զուայա ըրայէթէ էհէմիյէթ վէրմէյէր։ Էհայինին մէճմուր իսէ, շէհվէթտէն մատա զայէ, գօրգուտան պաշգա գուվվէթ վէ մէն-ֆաաթ ու միզաճրէրէսթիքտէն զայը պիր գանուն թանըմազլար։ Շէօյլէ քի, Ալլահըզ-լարտան միւթէշէքքիլ պիր ճէմիյէթի իտարէ իթմէք միւմքին տէյիլ տիր։

Ալլահ օլմազսա, արթըզ ատալէթ, գար-տալ մուհապպէթի, ֆէտաքեարըզ կիպի ֆէ-զայիլի իճթիմալիյէյէ իմքեան գալմազ։

Ատալէթի էմը իտէն Ալլահ օլմաթըզնա, քիմաէ օնուն իճյաթընտա պուլունմազ։ — Իքի թիւճճար բույէթի մուհապպէ իտէրլէր։

— Մագպուղ իրմուխապէրի խթմէ՞րմիսի-
նիդ :

— Հաճէ՞թ եօգ տըր , Ալլահ : պիդի կէօ-
րիւյօր . օ դատարը քեաֆի տիր :

— Տէմէք Ալլահա ինանըյօրմընըդ :

— Էվվէթ , եա սի՞դ :

— Խայր , պէն ինանմամ :

— Էօյլէ իսէ աէրհալ պանա մագպուղ
սէնէտի վէրինիդ :

Հայաթը իճթիմարիւ էլէ եաշայապիւմէք
իշին , մէնֆաաթը ումուճիյէյէ վազֆը նէֆս
իթմէք , պազը քերէ տէ օ ուզուրա ֆէտայը
ճան իթմէք կերէք տիր : Պարզ խախիզ քի ,
պէն էօն սաֆ գարազօլընտա նէվպէթ պէք-
լէյէն ատի պիր նէֆէրիմ . պաղթէթէն տիւշ-
մէն կէլմիշ պէնի իհաթա էյլէմիշ տիր . իմ-
տատ պօրուսը չալաճագ օլուրսամ , գուրչուն
վէ սիւնկիւլէրլէ բարչալաւաճաղըմա չիւպհէ
եօգ տըր . մամաֆիյ , վիճաւնըմ պանա ի-
շարէթ վէրիպ էօլմէյի էմր իտիյօր : Իմուի
էյէր պէնիմ պու ֆէտաքեարըղըմըն միւ-
քեաֆաթընը վէրէճէք Ալլահ վար իսէ , մա
էլ մէմուռնիյէ մէվթի գապուլ իտէրիմ : Շա-
յէտ Ալլահ եօգ իսէ , պէն , կէկեանէ մամէ-
լէքիմ օլան հայաթըմը , հիշ պիր իւմիտիմ
պուլուռնմատըղը հալտէ , նա՞սըլ ֆէտա իտէ-
րիմ : Վաթան իշին էօլմէլի տիր , տէրսինիզ ,
ֆագաթ Ալլահ եօգ իսէ վաթանըն նէ էհէմ-
միյէթի օլապիլիւր պէնիմ իշին :

Ալլահըզ եալընըզ ֆէզայիլի իճթիմարիյէ
մէվգութ տէյիլ տիր , իլլա հէր տիւրլիւ սէ-
յաթ վէ աղրազ թուլեան իտէր , ինսանլար
եէկտիկէրլէրինի բարէլէյէն հայվանաթը վահ-
չիյէ հալինի իքթիսապ իտէրլէր : Եա հապս ,
եա ժանգաւմալար նէրէ՞տէ գալմը տըրլար ,
տէյէճէքսինիզ : Պագաթ սիլմիշ օլմալը տըր
քի , վուգու պուլան հիւզ ճինայէթլէրուէն
սնճագ օնը զահիրէ չըզըյօր վէ ֆէճայինին
տէօրթտէ իւշիւ նիհանտա գալըյօր , ճէգա-
սիտէ՞ օլմայօր : Իմսի շայէտ Ալլահ օլմազսա ,
քի՞մէ գարչը մէսուլ օլուռնաճագ տըր , քի՞մէ
ճէվապ վէրիլէճէք տիր : Տէմէք տիր քի կա-
գայը ժանտարմալարըն էլինէ վէրմէմէք քի-
ֆայէթ իտէր : Պէօյլէ պիր ճէմիյէթ իսէ ,
գանլըլար ճէմիյէթինտէն սլաշգա պիր նամա
սէզապար օլտմազ :

Տիւնեանըն պիտայէթինտէն պու կիւնէ
գատտր կէլմիշ , կէշմիշ օլան ճէմիյէթլէրին
քեաֆէսի տախի իւշ էսասի հաղիգաթլար
իւղէրէնէ պինա խիլմիշ տիրլէր . եանի Ալ-
լահըն վարըղը , բուհըն վարըղը վէ պիր
հայաթը ուլսէվիյէնին վարըղը : Մօրալըն
պու իւշ էսասլարընը գալտըրմագ , ճէմիյէթ-
լէրի իխթիլալար կիրտապընա սէվգ իթմէք ,
օնլարըն հայաթընա գատ իթմէք տէմէք տիր :

Պրանսանըն 1793 իիթիլալը վէ 1871
Քօմիւնիւ միւնասիպէթիլէ տէօքիւլէն գան-
լար վէ աշըլան գանլը մէնզարէ , մէվգիի
ֆիլիլէ գօնուլան Ալլահըզըրգտան պաշգա պիր
շէյ տէյիլտի : Ճէմիյէթի եէրլէ եէքսան իթ-
մէք իսթէյէն Սօսիալիզմ , Աքիլիզմ պիր մէյվէի
թապիլտի տիր : Պիղլաթ Բօզիքիվիսքլէր պիլէ
պուլըն պէօյլէ օլուուլընը քէնսի քիթապլա-
ընտա վէ մէվգութէլէրինտէ իպրար իտիյօր-
լար : Պինաէն ալէյն , ճէմիյէթի պէշէրիյէնին
էսասը , հէր շէյէ գատիր , ատիլ , բահիմ , հէր
շէյին խալիլի , մատաի տիւնեայը գալմանիյ-
շը թապիլիյէ իլէ , ինսանլարը տա գալա-
նիյնը տիւլապիյէ վէ մանէվիյէ իլէ իտարէ ի-
տէն պիր Ալլահ օլմագ կերէք տիր : Հէր շէյ
պու պինա իւղէրինէ իսթինաւ իտէր :

(Մագպսի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ս Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Է

Նուիրական երաժշտութեան դպրոցին խմբը-
գութեան մասնաճիւղը Ս Գրաւատաի բակին մէջ ,
ի ներկաութեան Ս . Քաջանայապետին , երգեց Գու-
ես ՊԵՏՐԱ սքանչելի տաղը , ինչկրակցութեամբ քա-
ջանայապետական պաշակաւորաց նուագախումբին
Ներկայ էին Հոսի կղերմոցներուն և դպրոցներուն
աշակերանները , որ կը մասնաւորօրէն նուիրական երա-
ժշտութեան դպրոցին դատերուն :

Հոսի կաթողիկէ ձեռնհաս շրջանակներու մէջ
շատ յաւի տպաւորութիւն ձգեր է ռուս կառավա-
րութեան մէկ գործը որ Յիսուսեան Ընկերութեան
դէմ անիրաւ և անմիտ կողմնակալութիւն ցոյց կու
տայ :

Վարչաւիայի Սուրբ Ստանիսլաս Քոստօքա կրօնա-
կան ծագկեալ վարժարանը , Լէհաստանի մէջ ամենէն

երեւելին է. արդ՝ այդ վարժարանին մեծաւորին հրա-
ման եկած է ջնջելու Գոստոք անունը, բայց որով
ան Յիսուսեանի մը անունն է և Յիսուսեանները Ռու-
սիոյ մէջ օրինական գոյութիւն չունին:

Մեծաւորին եկած զեկուցագիրը կ'ըսէ թէ Վար-
ժարանը կրնայ կոչուիլ Ստանիսլաս, նկատելով որ
Ռուսաց կայսերական մէկ նշանը նոյն անունը կը կրէ:

*. Ափրիկէի անդղիական Օւկանտայի մէջ գրա-
նուոյ Աւսքելական փոխանորդութիւնը ունի 193,427
նորագարձ կաթողիկէներ, Յունիս 30 ին, Աւսքելա-
կան-փոխանորդ Սթրէշէր Գերագալստեանը ձեռնադրեց
երկու բնիկ քահանայներ, Ափրիկէի կեդրոնին մէջ ա-
ռաջին անգամն է որ այսպիսի ձեռնադրութիւն մը
անդի կ'ունենայ:

Այս երկրին մէջ մեծ անուն հանած է, Անդ-
ղիացոց գաղտնէն ի վեր, Ստանիսլաս անունով նո-
րագարձ կաթողիկէ մը, որ բնիկ աղնուակամներէն է.
ամուսնացած է քրիստոնէայ բարեպաշտ կնոջ մը հետ.
ունի տասնեւեօթը զաւակ, զորոնք գաւառաբնակած է
և կը դաստիարակէ Աստուծոյ երկեւորմը ու սիրովը:

Անդղիական կառավարութիւնը անուանած է
զայն Արդարութեան Նախարար, և Տառաքի թագա-
ւորին անշափահասութեան փամանակամիջոցին, թա-
ղաւորութեան երեք խնամակալներէն մին:

Ստանիսլաս շատ հանձնարեց մարդ և շատ ուսեալ
քրիստոնէայ մըն է և օրինակելի կեանք մը կը վարէ:

Իր մկրտութենէն ի վեր, 1885ին, գրեթէ երեք
զանց ըրած չէ տմէն առաւօտ եկեղեցի երթալ Մի-
սիստոնէանէն հետ իր մտածականը ընելու: Ապա պա-
տարաք կը աւանդէ, կը հաղորդուի և ներկայ կը գրա-
նուի ուրիշ շնորհակալութեան պատարագի մը և
քրիստոնէական վարդապետութեան որ կ'աւանդուի
նորագարձներուն: Ահա այսպէս իր կրօնական պա-
տեքը կատարելէն վերջը կ'երթայ Խորհրդարանը և իր
երկրին գործերով կը զբաղի:

Ամէն տարի Աւագ Երկուշաբթիէն մինչեւ Զատ-
կի կիրակին վեցօրեայ հոգեւոր կրթութիւն կ'ընէ:
Ամէնքը կը վկայեն իրեն կրօնասէր և ազգասէր ե-
ւանդին: Պրոս ժ. շնորհից իրեն Ս. Սեղրեւորոսի
կարգին Մեծ-Խաչ պատուանշանը, ի վարձ իր առա-
քինութեան:

*. Գերմանիա, կայսերական յորդանանին տաթիւ
հանգանակութիւն մը կատարուեց է տիրող պետու-
թեան մէջ, առաքելութեանց համար, որուն արգիւն-
քը բաշխուելու էր կաթողիկէ և բողոքական Առա-
քելութեանց միջեւ, այնպէս որ կաթողիկէից ընծա-
ները արուին կաթողիկէ առաքելութեանց, իսկ Բո-
ղոքականացը բողոքական առաքելութեանց, որ կը
զանուին գերման երկրներուն մէջ: Ասոր համար հա-
ւաքածմը զատ զատ կատարուեցաւ: Կայսրութեան
27 թեմերէն կաթողիկէայք հաւաքեցին 1,250,000
մարդ (1,500,000 ֆրանկ):

*. Բանի մը տարիէ ի վեր Ճարմոնի մէջ հա-
տատուած, բայց Գերմանիայէն արտաքսուած, Յի-

սուսեան հայրերը շատ անգամ պարտաւ տեղ խնդրած
էին կառավարութենէն համալսարան մը բանալու ար-
տօնութիւնը:

Կառավարութիւնը անոնց խնդիրքը կը մերժէր
պատճառ բերելով անոնց դպրոցներուն և վանատուն-
ներուն Գերմանիոյ մէջ փակուած ըլլալը: Վերջերս
շնորհիւ նորանոր գիտնականներու և անդեկատուութեանց
յաջողեցան ընդունիլ խնդրած արտօնութիւննին:

Ճարմոնի կրթական նախարարը, Մ. Հասարպա, Հայր
Տահլմանի յանձնեց արտօնագիրը: Համալսարանը կը
կոչուի Բարձր դպրոց իմաստութեան: Բոլոր հայրերը
գերմանացի Յիսուսեաններ են, բաց ի Հայր Պաշէէն
որ Յիսուսացի է և հայր Յու-Շիհասիէն որ Ճար-
մոնացի է:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ Հռոմ
գումարուած Ազգային Սրահ հոգսին գործերը հա-
տատուած են Ս. Քահանայապետէն, Յունիս 23ին:

*. Յունիս 29ին, կիրակի առաւօտ Նոր-Գիւղի Ս.
Յովհաննէս եկեղեցւոյն մէջ ձայնաւոր պատարագ ը-
րաւ և քարոզ խօսեցաւ Արհի. Յովսէփ Արքեպ. Ռո-
քոսեան, Կ. Պատրիարքական Փոխանորդը: Երեկոյն
ալ Ժամերգութենէն վերջը քարոզեց Գեր. Հ. Վր-
թանէս Ծ. Վ. Ուղուէտան:

*. Արհիպատիւ Խնամախոս Արքեպ. Մարցեան,
վիճակաւոր Մարտինի, որ բժշկական գործողութեան
մը համար գացած էր Բատուա՝ ամբողջ Խաղիոյ մէջ
երեւելի բրօքէտէօր Արայանին քով, յաջող գործողու-
թենէ մը վերջը անցեր է Հռոմ, ուր կը գտնուի այժմ:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Բ. Դուռը աւարտեր է Անատոլուի նահանգնե-
րուն մէջ ի գործ դրուելիք բարենորոգումներուն ծը-
րագրին պատրաստութիւնը: Այս ծրագիրը պիտի հը-
րատարակուի մօտերս և պիտի հաղորդուի օսմ. գե-
պաններուն և հաւանաբար նաեւ մեծ աւերութեանց
Պապոյ գեպաններուն: Ըստ այս ծրագրին լայն բարե-
նորոգումներ ի գործ պիտի դրուին:

*. Խաղիոյ, Մեծն Բրիտանիոյ, Ռուսիոյ, Գերմա-
նիոյ գեպանները և Ֆրանս. գործակատարը Յունիս
30ին իրոտ գումարեցին նախագահութեամբ գեպա-
նական մարմնոյն երիցագոյն անգամ Աւստրիական
գեպան մարքիզ Բալլաւիչինի: Դեպանները որդեցին
յանձնաժողով մը կազմել գեպանական բարձրատի-
ճան պաշտօնատարներէն, ուսուցնալիքու համար
Արեւելեան Անատոլուի նահանգներուն մէջ մտցուե-
լիք բարենորոգումները:

*. «Ազատամարտ»ի մէջ կը կարդանք.—

Ներքին գործերու նախարար Թալէթ Կէյ փո-
խադարձ այցելութեան եկաւ Արշարունի Պատրիար-
քին և կէս ժամու չափ տեսակցութիւն մը ունեցաւ:

Ինչպէս գիւրին է կռահել, խօսակցութիւնը շատ
շուտով դարձաւ Հայաստանի վեց նահանգներու բա-
րեկարգութեան վրայ:

Թալէաթ պէյ.— Անշուշտ յսեցիք որ գաւառներու մէջ արդէն սկսած են աւաղակները հետապնդել և շատերը ձերբակալուած են:

Պատրիարք.— Բայց դեռ չսկսեցինք որ գլխաւոր աւաղակապետները կը ձերբակալուեն:

Նախարար.— Անոնք ձեռք չեն անցնիր՝ միշտ ոռհմանէն Պարսկաստան կ'անցնին: Կը յուսանք որ հետզհետէ անոնք ալ ձեռք կը ձգենք: Մեր ջանքը չպիտի խնայենք՝ մտքբեղու համար երկիրը աւաղակներէ և Արեւելեան Անատոլիոյ վեց նահանգները բարեկարգելու: Արդէն Անգլիոցի տառնէն աւելի բարձր պաշտօնեաներ ուղեցինք Անգլիոյէն, որուն կառավարութիւնը չուզեց ինքը նշանակել հետեւաբար մենք սկսած ենք զատել զանոնք, թերեւս Զուլիգերիացի պաշտօնեաներ ալ ընտրենք:

Պատրիարք.— Բայց եթէ այդ բարեկարգութիւնները պիտի կատարուին կեդրոնացման սիսէմով, նորէն բան մը չըլլար:

Նախարար.— Ո՛չ, բարեկարգութիւններ պիտի հիմնուին ապակեդրոնացման վրայ: Ձեր Սրազմութեանէն կը խնդրենք որ մեզի օգնէք, եւ անանկ բան մը ընենք որ եւրոպական տնտեսութիւններ չմիջամտեն: Արդէն բացի եւրոպացի բողոքութիւն պաշտօնեաներէ, ընդհ. քննիչներ (միւլթրիբ) պիտի նշանակենք ամէն մէկ վիլայէթի մէջ կատարուելիք բարեկարգութեան հրահանգներ համար:

Թալէաթ պէյ ի վերջոյ խնդրեց որ գաւառներու մէջ պատահած ու և է դէպք երբ կը հեռագրուի Պատրիարքարան՝ անմիջապէս իրեն հաղորդուի, որպէս զի խիստ հրահանգներ տայ և ստիպողական դարձնենքը տանի:

*. Թանին սատիկ կը պահարակէ Ստաթ պէյը իր հետեւած ուղղութեամբ համար, և կը հրատարակէ անոր կողմէ Զարին ուղղուած հետեւեալ հեռագիրը:

«Վեփափառ Տէր, այն պահուն որ բովանդակ Թուրքիոյ կը հեծէ անցեալին մէջ անօրինակ սարսափի ռէժիմի մը ներքեւ, կը համարձակիմ յուսալ թէ Ձեր վեփափառութիւնը պիտի հաճի հաւատալ որ իսլամ եւ քրիստոնէայ բոլոր ժամանցի ինձ կը միանան կոչում բնելու համար Ձեր մարդասիրական եւ արդարասիրական զգացումներուն, ու պաղատելու համար որ Ձեր վեփափառութիւնը բարեհաճի ի գործ դնել իր հեղինակութիւնը, վերջ տալու համար իրաց վիճակի մը, որուն չափազանց երկար ատեն հանդուրժեց քաղաքակիրթ եւրոպացիները:»

*. Յունիս 30ին, իրիկուան ժամը 5ին (Ռ. Ե.) հրդեհ ծագեցաւ Պոլիս, ձըղալօղլուի և Այասօֆիայի մէջտեղը Երէկ Պաթոն թաղէն, փայտաշէն խոշոր տունէ մը: Անմիջապէս հասան հրդեհ զինուորներ, բայց փչող հովին ուժգնութենէն հրդեհը ծաւալեցաւ և բաժնուեցաւ հինգ ծիւղի և այրեց յիսուն տուն, երկու խանութ և մէկ վարժարան: Ասոնց մէջ էր Թալէաթ սէյի տունը և Լինկէր պէյի քարուկըր ապարանքը: Հրդեհը դիպուածի մը հետեւանք է:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Պուլկարները Յունիս 30ին յարձակեցան սերպ զօրաց վրայ Շիմիսի ուղղութեամբ և թնդանօթի կրակ բացին: Պուլկարները յարձակած են նաեւ ամբողջ հելլենական ծակտօն վրայ: Երկու կողմէն ստուարութիւն հետեւակազօրք և հրետանի կը մասնակցին ճակատամարտներուն:

*. Աթէնքէ Յունիս 30ին կը հեռագրուի թէ քաղաւոր Սելանիկ օդուորացիները:— Դաւաճարմը հրաման ստացաւ անմիջապէս մեկնելու դէպի Ցանկէզի եւ Էլէթրէս:

*. Մ. Բուանդարէ Լոնտոնէն մեծ պատուով ու մեծարանքներով մեկնել է Բարիկ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	417
Տէր Կոմիսսա Բանանայ	420
Ս. Հաղորդութիւնըն Բիւշիւք սերուիքսի	422
Եսթեր	425
Եօթնեակ Բիւսոնէի	426
Եկեղեցական-գիտական խնդիրներ.	427
Գաթիլիք Մէգնէլի Էստալար	428
Տեղեկագրական	430


ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԿՐԱՊԵՏ

ԳԵՌՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ



ԲԱԺԱՆՊՐԻԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դնկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ քիւ՝ 1 դնկ.:— Արասահման՝ տար. ճր. 10. վեցամս. 5.—Վնարմունք կանխիկ են:
ՀԱՍՅԷ.— Կաթողիկէ Արժագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.—Արժագանգ կը նրաստարակուի Շարաք օրերը: 2.— Խմբագրութիւնս պատշա-
տօրեայ չէ անպատշաճ կամ նոյնութեամբ նրաստարակել իրեն զրկուած ու եւ է յօդուած: 3.—Կեղծանունով զրկուած
յօդուածներու հեղինակը կը պատժի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին: 4.— Չեռագիրներ եւ չեն
դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան բուրժիւն մէկ կոտոր միայն: 6.— Ծանուց-
մանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրա-
ժեշտ երկու դանեկանի նամակադրով ի միասին զրկել:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արժագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս բոս ամենայնի նոյն եւ ի վիճակի է
որ եւ իցէ տպարանայան գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցմունք, զիրենք շեշտներ, հրաւիրագիրներ,
բարդեր, բարդ-աստիճաններ, մանաղլներ, եւն., եւն.: Դիւները ամամբջեկի կեղծով տնայն են: Դեղեցկագիտական նա-
շակի եւ տպագրական մատուցեալք կողմանէ յանապտուղները անտարակոյս գոհ պիտի մնան:

ԿԸ ԾԱՆՈՒԹԻ ԵՍՏՐԱԿԱՆ ԱՊՐԱՆԻՔ ԲՐԽՍՏՈՒՄԿԱՆ Վարդապետութեան հաստատել եկեղեցական իշխա-
նութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Դիւն, ամուր քղթախազմը 2 դնկն.:
